

*Перевод с русского на армянский язык осуществлен ГНКО
«Центр переводов министерства юстиции Республики Армения»
от «1» ноября 2019 года*

*Ռուսերենից հայերեն թարգմանությունն իրականացվել է
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
«Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից
1 նոյեմբերի 2019 թվականի*



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

16 հոկտեմբերի 2019 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան, հետևյալ կազմով՝

նախագահող՝ Դատարանի նախագահ Ժ.Ն. Բաիշեւ,

զեկուցող դատավոր՝ Գ.Ա. Սկրիպկինա,

դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրաիմովա, Է.Վ. Հայրիյան, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն. Նեշատաեւա, Վ.Խ. Սեյտիմովա, Ա.Է. Թումանյան, Ա.Ա. Ֆեդորցով, Կ.Լ. Չայկա,

քարտուղարությամբ՝ դատական նիստի քարտուղար Ա.Ն.Ադերեյկոյի,

լսելով զեկուցող դատավորին, ուսումնասիրելով գործի նյութերը, ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է հետևյալ խորհրդատվական եզրակացությունը՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) 1-ին կետի դրույթները պարզաբանելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի համաձայն:

I. Դիմողի կողմից ներկայացված հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ դիմող, Հանձնաժողով) դիմել է Դատարան՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) (այսուհետ՝ Արձանագրություն) 1-ին կետի դրույթները պարզաբանելու մասին դիմումով:

Դիմողը նշում է, որ Արձանագրության 1-ին կետում նախատեսվում է, որ այդ փաստաթղթով սահմանվում է ներմուծման այն մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ անդամ պետությունների միջեւ բաշխելու կարգը, որոնց վճարման պարտավորությունը Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների առնչությամբ ծագել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Արձանագրության II բաժնի 3-րդ կետին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի գումարները ենթակա են ազգային արժույթով հաշվեգրման Միության այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող եւ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի գանձման դեպքում:

Միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության դրույթները պահպանելու նկատմամբ ստուգում անցկացնելու արդյունքներով Հանձնաժողովն ստացել է տեղեկատվություն այն մասին, որ 2016 թվականին Հայաստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում (այսուհետ՝ Միությանը միացած պետություններ) 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո, սակայն նախքան նշված երկրների՝ Միությանը միանալը ներմուծված ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը (տուժանքները) Միության անդամ պետությունների բյուջեների միջեւ չեն բաշխվել:

Ընդ որում, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում (այսուհետ՝ հիմնադիր պետություններ) 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո եւ նախքան Հայաստանի Հանրապետության ու Ղրղզստանի Հանրապետության միանալը ներմուծված ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, որոնք միասնական հաշիվներին են հաշվեգրվել նշված երկրների միանալուց հետո, բաշխվում են Միության բոլոր անդամ պետությունների բյուջեների միջեւ:

Միությանը միացած պետությունների կարծիքով՝ ներմուծման այն մաքսատուրքերի գումարները, որոնց վճարման պարտավորությունը ծագել է ապրանքները Հայաստանի Հանրապետության ու Ղրղզստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ՝ նախքան Միությանը դրանց միանալու ամսաթիվը, ենթակա չեն Միության մյուս անդամ պետությունների բյուջեների

միջեւ բաշխման՝ անկախ վճարման ժամկետներից, քանի որ դիտարկվող ժամանակահատվածում ապրանքները ներմուծվել են ոչ թե Միության մաքսային տարածք, այլ Միությանը միացած պետությունների մաքսային տարածքներ: Համապատասխանաբար, ներմուծման մաքսատուրքերը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է նախքան Միությանն այդ երկրների միանալը, չեն կարող դիտարկվել որպես ներմուծման մաքսատուրքեր՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Միության մասին պայմանագիր) եւ Արձանագրության իմաստներով:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության՝ Միությանը միանալու մասին պայմանագրերը, ինչպես նաեւ Արձանագրությունը չեն պարունակում հիմնադիր պետություններում վճարված ներմուծման այն մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման առանձնահատկությունները, որոնց վճարման պարտավորությունը ծագել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ Միությանը Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության միանալն ընկած ժամանակահատվածում:

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը կարծում են, որ Միությանը Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության միանալուց հետո վճարված ներմուծման մաքսատուրքերի նշված գումարների բաշխումը պետք է իրականացվի Միության բոլոր հինգ անդամ պետությունների բյուջեների միջեւ այնպես, ինչպես դա տեղի է ունենում ներմուծման այն մաքսատուրքերի գումարների առնչությամբ, որոնց վճարման պարտավորությունը հիմնադիր պետություններում դրանց վճարման համար պատասխանատու անձանց մոտ ծագել է նախքան Միությանը Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության միանալը, եւ որոնք վճարվել են նշված միանալուց հետո:

Հանձնաժողովը կարծում է, որ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված

պայմանագրով (այսուհետ՝ Ղրղզստանի Հանրապետության միանալու մասին պայմանագիր), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված պայմանագրով (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության միանալու մասին պայմանագիր) սահմանված են Միության այս անդամ պետությունների կողմից Արձանագրության կիրառումն սկսելու ամսաթվերը (համապատասխանաբար՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ը եւ 2015 թվականի փետրվարի 1-ը): Ընդ որում, ինչպես նշում է դիմողը, միանալու մասին պայմանագրերը չեն պարունակում Արձանագրության առանձին դրույթները չկիրառելու մասին կամ դրա դրույթները բացառումներով կիրառելու մասին առանձին վերապահումներ:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Հանձնաժողովը Դատարան է դիմում Արձանագրության 1-ին կետի դրույթների կիրառության առնչությամբ խորհրդատվական եզրակացություն տրամադրելու խնդրանքով՝ Միությանը Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության միանալուց հետո հաշիվներին մուտքագրված ներմուծման այն մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի մասով, որոնց վճարման պարտավորությունը ծագել է՝

Հայաստանի Հանրապետության համար՝ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2015 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում.

Ղրղզստանի Հանրապետության համար՝ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:

II. Ընթացակարգը Դատարանում

Դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101

որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Դատարանի կանոնակարգ):

Դատարանի ստատուտի 73-րդ կետով նախատեսվում է, որ Դատարանը պարզաբանման վերաբերյալ գործերը քննում է Դատարանի մեծ կոլեգիայի նիստերին:

Դիմողի կողմից հայցվող խորհրդատվական եզրակացությունը կայացնելու առնչությամբ Դատարանի՝ առարկայական եւ ըստ սուբյեկտի իրավագործությունը սահմանված է Դատարանի ստատուտի եւ Դատարանի կանոնակարգի դրույթների հիման վրա՝ Դատարանի մեծ կոլեգիայի 2019 թվականի ապրիլի 15-ի՝ Հանձնաժողովի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ:

Դատարանի կողմից գործը քննության նախապատրաստելու շրջանակներում Ստատուտի 55-րդ կետով սահմանված կարգով հարցումներ են ուղարկվել Միության անդամ պետությունների մարմիններ եւ գիտական հաստատություններ, պահանջվել են Հանձնաժողովում հայցվող պարզաբանմանն առնչվող լրացուցիչ փաստաթղթեր եւ նյութեր:

Դատարանն ստացել է ուսումնասիրել է հարցումների պատասխանները՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, հաշվեքննիչ պալատից, Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Էկոնոմիկայի նախարարությունից, ֆինանսների նախարարությունից, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, ֆինանսների նախարարությունից, Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, հաշվիչ պալատից, Կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայությունից, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունից, Երեւանի պետական համալսարանից, Բելառուսի Հանրապետության մաքսային մարմինների կադրերի որակավորման բարձրագույն եւ վերապատրաստման պետական ինստիտուտից, Ղրղզստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի՝ ակադեմիկոս Դ.Ա. Ալիշբաևի անվան տնտեսագիտության ինստիտուտից:

Հանձնաժողովը ներկայացրել է լրացուցիչ փաստաթղթեր եւ նյութեր:

III. Դատարանի եզրահանգումները

Դատարանի ստատուտի 46-րդ կետի համաձայն՝ Դատարանը Միության մարմնի դիմումի հիման վրա իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում:

Դատարանի ստատուտի 50-րդ կետին համապատասխան՝ արդարադատություն իրականացնելիս Դատարանը կիրառում է միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը եւ Միության իրավունքի նորմերը մեկնաբանում է՝ հաշվի առնելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) դրույթները, որի մասնակիցներն են Միության բոլոր անդամ պետությունները:

Տվյալ կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագիրը մեկնաբանվում է բարեխղճորեն՝ պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ պայմանագրի առարկայի եւ նպատակների լույսի ներքո՝ հաշվի առնելով դրա տեքստը, նախաբանը եւ հավելվածները: Համատեքստի հետ մեկտեղ այդ թվում հաշվի են առնվում այդ պայմանագրի դրույթների կիրառության առնչությամբ մասնակիցների միջեւ ցանկացած հետագա համաձայնագիր, դրա կիրառության հետագա գործելակերպը եւ մասնակիցների միջեւ հարաբերություններում կիրառվող՝ միջազգային իրավունքի համապատասխան նորմերը:

1. Միության մասին պայմանագրի 26-րդ հոդվածին համապատասխան՝ վճարված (զանձված) ներմուծման մաքսատուրքերը ենթակա են հաշվեգրման եւ բաշխման անդամ պետությունների բյուջեների միջեւ:

Ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրումն ու բաշխումը, անդամ պետությունների բյուջեներ որպես եկամուտ դրանց փոխանցումն իրականացվում են Արձանագրությամբ սահմանված կարգով:

Արձանագրությամբ սահմանվում է ներմուծման այն մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ անդամ պետությունների միջեւ բաշխելու մեխանիզմը, որոնց վճարման պարտավորությունը Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների առնչությամբ ծագել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Կիրառելով պատմական մեկնաբանության մեթոդը՝ Դատարանի մեծ կոլեգիան եկել է այն եզրահանգմանը, որ 2010 թվականի սեպտեմբերի 1-ը որպես Միության տարածքում ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման սկզբի ամսաթիվ սահմանելը պայմանավորված է Մաքսային միության իրավական բազայի հաջորդականությամբ, մասնավորապես՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կողմից ստորագրված՝ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման ու բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագիրը (այսուհետ՝ 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագիր) նշված ամսաթվից ուժի մեջ մտնելու փաստով:

«Միասնական մաքսային տարածքի ստեղծման եւ Մաքսային միության ձեւավորման մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի 2-րդ հոդվածի վերլուծությունը վկայում է, որ մաքսային միության ձեւավորմանը նախորդել է միասնական մաքսային սակագնի սահմանումը, ինչպես նաեւ մաքսատուրքերի, համարժեք ազդեցություն ունեցող այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանումը: Այդ պատճառով Միության մասին պայմանագրի թիվ 6 հավելվածը հանդիսացող՝ «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» արձանագրությունն ուժի մեջ մտնելուց առաջ գործող՝ 2008 թվականի հունվարի 25-ի «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» համաձայնագրի ընդունումը, ինչպես նաեւ նախքան Արձանագրությունն ուժի մեջ մտնելը գործող՝ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք ազդեցություն ունեցող այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների) հաշվեգրման ու բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» համաձայնագրի ընդունումը եղել են Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորման փուլերից մեկը:

2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով սահմանվել է ներմուծման այն մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ բաշխման կարգը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների առնչությամբ:

Մաքսային միության նորմատիվ իրավական բազայի վերլուծությունը Դատարանի մեծ կոլեգիային թույլ է տալիս եզրակացնել, որ Մաքսային միության ձեւավորմամբ Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունն ստանձնել են միջազգային իրավական պարտավորություններ՝ ներմուծման մաքսատուրքերը հաշվարկելիս 2010 թվականի սեպտեմբերի 1-ից միասնական մաքսասակագնային կարգավորում կիրառելու, ինչպես նաեւ դրանք տվյալ պետությունների բյուջեների միջեւ բաշխելու մասով:

Մաքսային միության անցումային դրույթները կարգավորող՝ Միության մասին պայմանագրի 99-րդ հոդվածով նախատեսվում է Մաքսային միությունից եւ Միասնական տնտեսական տարածքից Եվրասիական տնտեսական միությանը եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացի զարգացման դեպքում իրավունքի համակարգի հաջորդականությունը:

Արձանագրության 1-ին կետում դրանով սահմանված՝ ներմուծման այն մաքսատուրքերի հաշվեգրման եւ բաշխման կարգի մասին նշումը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից, կոչված է ապահովելու Մաքսային միության նկատմամբ Միության իրավական կարգավորման հաջորդականությունը, սակայն դրանով չի սահմանվում Պայմանագրի 26-րդ հոդվածի հետադարձ գործողության մասին ընդհանուր կանոնը՝ Միությանը 2015 թվականի հունվարի 1-ից հետո միացած պետությունների առնչությամբ:

2. Միության մասին պայմանագրի նախաբանից հետեւում է, որ Միության հիմնադիր պետություններն են Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը, որոնց առնչությամբ Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից:

3. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը միացել է Միության մասին պայմանագրին, ինչպես նաև Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձեւավորման շրջանակներում կնքված՝ համապատասխան ցանկով Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի, եւ Միանալու մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից դարձել է Եվրասիական տնտեսական միության անդամ: «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու կարգը սահմանված է Միանալու մասին պայմանագրի 6-րդ հոդվածով: Հայաստանի Հանրապետության միանալու մասին պայմանագիրն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ին:

Հայաստանի Հանրապետության միանալու մասին պայմանագրի 3-րդ հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ տվյալ պետության համար Արձանագրությունը ենթակա է կիրառման Միանալու մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, այսինքն՝ 2015 թվականի փետրվարի 1-ից:

4. Ղրղզստանի Հանրապետության՝ Միությանը միանալու պայմանների մասով Կողմերի պայմանավորվածությունները սահմանող ակտ է դրա միանալու մասին պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել 2015 թվականի օգոստոսի 12-ին:

Ղրղզստանի Հանրապետության միանալու մասին պայմանագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Արձանագրությունը կիրառվում է Ղրղզստանի Հանրապետության կողմից Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի (այսուհետ՝ Միության միասնական մաքսային սակագին) կիրառումն սկսելու ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից:

Միանալու մասին պայմանագրի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված է, որ Ղրղզստանի Հանրապետության կողմից Միության միասնական

մաքսային սակագնի կիրառման սկիզբ է պետական սահմանի դրդա-
դազախական հատվածով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային
միջոցների մաքսային հսկողության վերացման մասին Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի կողմից որոշում ընդունելու ամսաթիվը: Եվրասիական
տնտեսական բարձրագույն խորհուրդն այդ թիվ 5 որոշումն ընդունել է
2015 թվականի մայիսի 8-ին, եւ այն ուժի մեջ է մտել Ղրղզստանի
Հանրապետության՝ Միության մասին պայմանագրին միանալու մասին
պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, այսինքն՝ 2015 թվականի օգոստոսի 12-ին:

Այսպիսով, Ղրղզստանի Հանրապետության կողմից Արձանագրության
կիրառումն սկսելու ամսաթիվ է սահմանվել 2015 թվականի հոկտեմբերի 1-ը:

5. Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության՝
Միության մասին պայմանագրին միանալուց հետո Արձանագրությունը՝ որպես
Պայմանագրի անբաժանելի մաս, Միության հիմնադիր պետությունների եւ
Հայաստանի Հանրապետության միջեւ հարաբերություններում իրավաբանորեն
պարտադիր է դարձել 2015 թվականի փետրվարի 1-ից, իսկ Միության մյուս անդամ
պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության հետ Ղրղզստանի
Հանրապետության հարաբերություններում՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության՝
Միությանը միանալու մասին ակտերով սահմանվում են Արձանագրության
կիրառումն սկսելու ամսաթվերը տվյալ պետությունների առնչությամբ, եւ
դրանցում նշված չէ, որ Արձանագրությունը տարածվում է նախքան
համապատասխան ամսաթվերը ծագած հարաբերությունների վրա: Դա թույլ է
տալիս Դատարանի մեծ կոլեգիային համարել, որ Արձանագրությունը եւ դրանով
սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերը հաշվեգրելու եւ բաշխելու կարգը
կիրառվել են միայն Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի
Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ հարաբերություններում:

Տվյալ եզրահանգումը համաձայնեցվում է Վիեննայի կոնվենցիայի 34-րդ
հոդվածի հետ, որի համաձայն՝ պայմանագրով երրորդ պետության համար

պարտավորություններ կամ իրավունքներ չեն առաջանում առանց նրա՝ այդ մասով համաձայնության: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը եւ Ղրղզստանի Հանրապետությունը նախքան Միությանը միանալը եւ իրենց կողմից Արձանագրության կիրառումն սկսելը Միության նկատմամբ եղել են երրորդ պետություններ, Արձանագրությամբ նրանց համար չեն սահմանվում պարտավորություններ՝ հոգուտ այլ անդամ պետությունների այն մաքսատուրքերը բաշխելու տեսքով, որոնք ենթակա են վճարման իրենց մաքսային տարածքներում ապրանքներ տեղափոխելիս:

6. Միության մասին պայմանագրի 26-րդ հոդվածի եւ Արձանագրության 1-ին կետի համատեքստային մեկնաբանությունը թույլ է տալիս Դատարանի մեծ կոլեգիային գալ այն եզրահանգմանը, որ Միության մաքսային տարածքում տեղափոխվող ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի վճարումը իրավաբանական փաստ է, որի հետ կապված է ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Միության անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխելու պարտավորության ծագումը:

Ելնելով այն փաստական հանգամանքներից, որոնք հիմք են հանդիսացել Հանձնաժողովի կողմից պարզաբանման մասին դիմում ներկայացնելու համար, ինչպես նաեւ Արձանագրության 1-ին կետի տառացի մեկնաբանությունից՝ Դատարանի մեծ կոլեգիան անհրաժեշտ է համարում սույն խորհրդատվական եզրակացության շրջանակներում վերլուծելու Միության իրավունքի՝ մաքսային իրավահարաբերությունները կանոնակարգող նորմերի դրույթները:

7. Ներմուծման մաքսատուրք ասելով՝ Միության մասին պայմանագրի 25-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն պետք է հասկանալ պարտադիր վճար, որն անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից գանձվում է Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման կապակցությամբ:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Միության մաքսային օրենսգիրք) 2-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով «ապրանքների ներմուծում Միության մաքսային տարածք» հասկացության ներքո

սահմանված է Միության մաքսային սահմանը հատելու հետ կապված այն գործողությունների իրականացումը, որոնց արդյունքում ապրանքները Միության մաքսային տարածք են ժամանել ցանկացած միջոցով: Միության մաքսային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Միության մաքսային տարածքը կազմում են անդամ պետությունների տարածքները, ինչպես նաև դրանց սահմաններից դուրս գտնվող այն արհեստական կղզիները, կառույցները, կայանքները եւ մյուս օբյեկտները, որոնց նկատմամբ անդամ պետություններն ունեն բացառիկ իրավագործություն:

Միության մաքսային օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված է, որ ներմուծման մաքսատուրքերը հաշվարկելու համար կիրառվում են Միության միասնական մաքսային սակագնի՝ մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերը:

Թվարկված իրավական նորմերի փոխկապակցված մեկնաբանությունը վկայում է, որ Միության իրավունքի իմաստով ներմուծման մաքսատուրքը վճարվում է Միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերով եւ միայն ապրանքների՝ Միության մաքսային սահմանը հատելու եւ դրա անդամ պետությունների տարածք ժամանելու դեպքում:

Ներմուծման մաքսատուրքերի բաշխման եւ հենց Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման անբաժանելի կապի մասին դիրքորոշումը հաստատվում է նաև Պայմանագրի՝ «Մաքսային միության գործունեությունը» VI բաժնում «Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրումն ու բաշխումը» 26-րդ հոդվածի տեղի պարզաբանման միջոցով:

Պայմանագրի 25-րդ հոդվածի վերլուծությունը, որով ամրագրվում են այն սկզբունքները, որոնց հիման վրա գործում է մաքսային միությունը, վկայում է, որ ներմուծման մաքսատուրքերի բաշխումն ուղեկցվում է ապրանքների ներքին շուկայի գործունեությամբ եւ անդամ պետությունների տարածքների միջեւ դրանց ազատ տեղափոխմամբ: Ապրանքների տեղափոխման ազատությունն ապահովվում է այդ թվում դրանք Միության մաքսային տարածք ներմուծելիս

ներմուծման մաքսատուրքերը Միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերով վճարելու միջոցով:

Արձանագրության 3-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված է, որ ներմուծման մաքսատուրքերի գումարներն ազգային արժույթով հաշվեգրվում են այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող եւ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի գանձման դեպքում: Տվյալ իրավական նորմի տառացի մեկնաբանությունը վկայում է, որ բաշխման ենթակա են միայն ներմուծման այն մաքսատուրքերը, որոնք վճարվել եւ գանձվել են Միության իրավունքին համապատասխան:

8. Միության մասին պայմանագրի 25-րդ հոդվածի 2-րդ կետի, Արձանագրության 1-ին եւ 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության միանալու մասին պայմանագրի 1-ին հոդվածի, տվյալ պայմանագրի թիվ 3 հավելվածի 2-րդ կետի, Ղրղզստանի Հանրապետության միանալու մասին պայմանագրի 1-ին հոդվածի եւ 8-րդ հոդվածի 2-րդ կետի, Միության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, 5-րդ հոդվածի 1-ին կետի, 53-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համակարգային մեկնաբանությունը Դատարանի մեծ կոլեգիային թույլ է տալիս գալ այն եզրահանգմանը, որ Արձանագրությամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Միության անդամ պետությունների միջեւ բաշխելու կարգը կիրառվում է հետեւյալ պայմանների միաժամանակյա պահպանման դեպքում.

ներմուծման մաքսատուրքերը հաշվեգրվել են Միության (մաքսային միության) մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների համար.

համապատասխան մաքսատուրքերի գումարները ենթակա են վճարման Միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերով, որոնց վճարման պարտավորությունը ծագել է Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների առնչությամբ՝ Եվրասիական տնտեսական միությունը հիմնադրած

երկրների համար՝ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից, Միությանը միացած պետությունների համար՝ 2015 թվականի փետրվարի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության համար, 2015 թվականի հոկտեմբերի 1-ից՝ Ղրղզստանի Հանրապետության համար:

9. Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության միանալու մասին պայմանագրերը ակտեր են, որոնցով սահմանվում են Միությանը տվյալ պետությունների միանալու պայմանները:

Միանալու մասին պայմանագրերում եւ դրանց հավելվածներում բացակայում են 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրին հղումները, որը Միության հիմնադիր պետությունների համար գործել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից, ինչը բացառում է ներմուծման այն մաքսատուրքերը բաշխելու պարտավորությունը Միությանը միացած պետությունների վրա տարածելը, որոնք վճարվել են նշված Համաձայնագրի կիրառումն սկսելուց հետո եւ նախքան այդ պետությունների կողմից Արձանագրության կիրառումն սկսելը:

10. Դատարանի մեծ կոլեգիան, չկատարելով Միության անդամ պետությունների օրենսդրության մեկնաբանություն, այլ այն դիտարկելով որպես փաստական հանգամանք, փաստում է, որ դիտարկվող ժամանակահատվածներում (Հայաստանի Հանրապետության համար՝ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2015 թվականի հունվարի 2-ը, Ղրղզստանի Հանրապետության համար՝ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2015 թվականի օգոստոսի 12-ը) գործել են մաքսային իրավահարաբերությունները կարգավորող ազգային նորմատիվ իրավական ակտերը՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը եւ Ղրղզստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը, որոնց կանոնների համաձայն ապրանքները տեղափոխվել են տվյալ պետությունների մաքսային տարածքներով, իրականացվել է դրանց մաքսային ձեւակերպումը, ազգային մաքսային սակագների դրույքաչափերով ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրումը եւ ազգային բյուջեներ դրանց վճարումը:

2015 թվականի հունվարի 2-ին ուժը կորցրած՝ Հայաստանի Հանրապետության՝ 2000 թվականի օգոստոսի 9-ի մաքսային օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանվում էր, որ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքն ընդգրկում է ցամաքային, ջրային եւ օդային տարածքը, որոնց սահմանագծերը համարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը:

Նախքան Ղրղզստանի Հանրապետության միանալու մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը գործող՝ Ղրղզստանի Հանրապետության՝ 2004 թվականի հուլիսի 12-ի մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանվում էր, որ Ղրղզստանի Հանրապետության տարածքը կազմում է միասնական մաքսային տարածք՝ ներառյալ ցամաքային տարածքը եւ դրա վրա գտնվող օդային տարածությունը, որի սահմաններում Ղրղզստանի Հանրապետությունը մաքսային գործի առնչությամբ ունի բացառիկ իրավագործություն: Մաքսային տարածքի սահմանները համարվում են դրա մաքսային սահմանը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության միանալու մասին պայմանագրերի դրույթները՝ նշված պետությունների մաքսային տարածքները Միության մաքսային տարածքի կազմի մեջ են մտել Միությանը միանալու մասին համապատասխան պայմանագրերն ուժի մեջ մտնելու պահից:

11. Ելնելով Միության անդամ պետությունների եւ մարմինների կողմից Պայմանագրի, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի, երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների միատեսակ կիրառումն ապահովելու մասով Դատարանի գործունեության հիմնական նպատակից՝ Դատարանի մեծ կոլեգիան գալիս է հետեւյալ եզրահանգմանը.

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին»

2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) սահմանվում է ներմուծման այն մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Եվրասիական տնտեսական միության հիմնադիր պետությունների միջեւ բաշխելու կարգը, որոնց մասով Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների առնչությամբ վճարման պարտավորությունը ծագել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին միացած պետությունների համար՝ Հայաստանի Հանրապետության համար՝ 2015 թվականի փետրվարի 1-ից, Ղրղզստանի Հանրապետության համար՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ից:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել էլ հիմնովին:

Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել էլ Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ժ.Ն. Բախշեւ

Դատավորներ՝

Ա.Մ. Աժիբրաիմովա

Է.Վ. Հայրիյան

Դ.Գ. Կոլոս

Տ.Ն. Նեշատաեւա

Վ.Խ. Սեյտիմովա

Գ.Ա. Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա. Ֆեդորցով

Կ.Լ. Չայկա